տեղը, շինութիւններ շինած և խմորած են զքուրդս ի մոլեռանդութիւն։

Հին Վաղարշակերտի միջավայրը, որ և այժմեան շինութեանց ի հիւսիս արևմուտս բարձրացած է մի բլուր, որ ամբողջովին բնական կրէ և կրաքարէ կազմուած է։

Այս բլուրը երեք կողմէ մատչելի է. անմատչելի է հիւսիս արևելեան կողմից, ուստի Ֆէհրատի ձորակը անցնելով խորութիւն մի ձգած է. որով այս կողմէն սեպ է բլուրս։

Բլուրիս գագաթը կը տեսնուին հինաւուրց շինուած պարսպի բեկորներ. որք տակաւին կերևին բլուրիս գագաթան շուրջը բոլորշի պատած, որձաքարով և կրով հիւսուած, 1880 թուականին դեռ մեծաւ մասամբ կանգուն էին պարսպի շուրջն իրարմէ հաւասար հեռաւորութեամբ տասնի չափ աշտարակներ, որք մասամբ իւրք պարսպից դուրս ելած լինելուն՝ պարսպին յենարան դարձած էին։

Քուրդ և թուրք ժողովուրդը 10-15 տարիներէ ի վեր սկսած է քանդել, ցած դլորել քարերն նոր շինութեանց գործածելու համար. այդ պեղումներէն տեսնուեցաւ ներքնուղիներ, որք բերդիս յատակի այլ և այլ մասանց հետ հաղորդակցութիւն կայր. նաև հարաւային պարսպի ներքին կողմն ի խոր կոփուած կայր մի ճանապարհ, ուստի կիջնար 2-3 մղոն խոնարհ գըտնուած Սորանցոց աղբիւրի ներքևն և ձորակիս այն կողմից մինչև Ցարաղաճ կը բարձրանայր։

Բերդիս գագաթան պարսպի մէջ երկու արտավարի չափ տափարակ է. որ երկու մասի բաժանուած է, մի մասը տափարակ՝ միւսն սակաւ ինչ հակեալ յարևելս։